IIT Chicago-Kent College of Law

ILLINOIS INSTITUTE OF TECHNOLOGY

ՀՀ իրավաբանների համար

Չիկագո - Քենթիիրավաբանական քոլեջը հայտարարում է իրավագիտության մագիստրոսի ծրագիրՎրաստանում (ք. Թբիլիսի) և ԱՄՆ-ում (Չիկագո) 75% -100% կրթաթոշակների տրամադրմամբ

ԱՄՆ-ում հիմնադրված Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջը Կովկասում Ամերիկյան Իրավունքի Դպրոցի հետ համատեղ, հայտարարում է երկու փոխկապակցված ծրագրեր ՀՀ իրավաբանների համար՝ **երաշխավորված 100% և 75% կրթաթոշակի տրամադրմամբ.**

- Ամերիկյան իրավունքի դպրոցի ծրագիր **/Թբիլիսի, Վրաստան/** և այնուհետև
- Իրավաբանական գիտությունների մագիստրոսական ծրագիր **/Չիկագո, Իլլինոյս նահանգ, ԱՄՆ/**:

Ամերիկյան իրավունքի դպրոցի ծրագրի տևողությունն է երկու կիսամյակ Վրաստանում, Թբիլիսիում: սեպտեմբերից դեկտեմբեր (առաջին կիսամյակ) և հունվարից մայիս (երկրորդ կիսամյակ): Երկու կիսամյակը ներառում է 10 պարտադիր դասախոսություններ, որոնք անց են կացվելու անգլերենով, **բացառապես ԱՄՆ–ից և Միացյալ թագավորությունից ժամանած Չիկագո-Քենթի դասախոսների կողից**: Նշված տասը պարտադիր դասընթացները ընդգրկում են հետևյալ արդիական առարկաները՝ **Միջազգային բիզնես գործարքներ, Էլեկտրոնային առևտուր, Առցանց գործարքներ, Հակամենաշնորհային իրավունք, Մտավոր սեփականության ակտիվների կառավարում, Մտավոր սեփականության իրավունք, Համաշխարհային մտավոր սեփականության իրավունք, Ապրանքային նշանի իրավունք, Համեմատական իրավունք, Ամերիկյան իրավական համակարգի ներածություն և Իրավաբանական գրագրություն:**

Ուսումնական մեթոդը ենթադրում է **ամսական մեկ անգամ (հինգ դասընթաց յուրաքանչյուր կիսամյակ)** անցկացվող ինտենսիվ դասախոսություն՝ **բացառապես հանգստյան օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 17.00-ն:** Ընդհանուր առմամբ, 5 հանգստյան օր դասընթացները պետք է անցկացվեն իրական ժամանակի ռեժիմով: Բացի այդ, ԱԻԴ ուսանողներին տրվելու են նյութեր դասընթացներից առաջ և հետո ընթերցանության համար: ԱԻԴ ծրագրի համակցված կառուցվածքը միավորում է **5 դասընթացներ Թբիլիսիում, Վրաստանում՝ ինտենսիվ իրական ժամանակի ռեժիմով և 5 դասընթացներ առցանց ռեժիմով:** Այն ուսանողները, ովքեր կարող են հանգստյան օրերն անցկացնել աշխատանքից և ընտանիքից հեռուն ցանկություն կունենան ավելի շատ ժամանակ անցկացնել ավանդական լսարանայինմիջավայրում, ամսեկան մեկ անգամ կհրավիրվեն Թբիլիսի՝ մասնակցելու տասը պարտադիր դասընթացների: Այն ուսանողները, ովքեր Վրաստանից չեն և չեն կարող ֆիզիկապես մասնակցել իրական ժամանակի ռեժիմով անցկացվող դասընթացներին, կարող են 5 դասընթացներին մասնակցել առցանց ռեժիմով, սակայն մնացած 5 դասընթացների մասնակցությունը լսարանային դասընթացների միջոցով պարտադիր է: Համաձայն վերոնշյալ հնարավորության, ուսանողները կարող են նախապես ընտրել ԱԻԴ ծրագրի ուսումնառության իրենց համար նախընտրելի տարբերակը: ԱԻԴ ծրագիրը կտեղեկացնի ուսանողներին, թե որ դասընթացները կարող են անցկացվել առցանց ռեժիմով:

Ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտները շարունակում են իրավաբանական գիտությունների մագիստրոսի աստիճանի համար իրենց կրթությունը Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջում /Չիկագո, Իլինոյս, ԱՄՆ/: **Մագիստրոսի դասընթացներն Չիկագո-Քենթում տևում է մեկ կիսամյակ /հինգ ամիս/,** մեկ ուսումնական տարվա փոխարեն՝ **«ԱՄՆ, Միջազգային և Անդրազգային Իրավունք»** մասնագիտությամբ Իրավաբանական գիտությունների մագիստրոսի աստիճանի շնորհմամբ: Սա հետբուհական ակադեմիական ծրագիր է, որի տևողությունը հինգ ամիս է ԱԻԴ շրջանավարտների համար: ԱԻԴ–ի վկայական ունենալու պարագայում, իրավաբանական գիտությունների մագիստրոսական կոչում ստանալու համար անհրաժեշտ է մեկ կիսամյակ լիարժեք ուսուցում, միևնույն ժամանակ կարող են շարունակել կրթությունը ևս մեկ կիսամյակ Իրավաբանական գիտությունների թեկնածու (Ph.D) ծրագրով և մասնագիտական այլ ձեռքբերումների (փաստաբանական քննության) համար:

Մեր ծրագրի շրջանավարտները կստանան՝

- **Ամերիկյան իրավունքի դպրոցի ավարտական վկայագիր, Թբիլիսիում, Վրաստանում ԱԻԴ ծրագիրը ավարտելուց հետո:** Վկայագիրը կտրվի Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջի և Ամերիկյան Իրավունքի Դպրոցի կողմից համատեղ՝ ստորագրված Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջի դեկանի և Ամերիկյան իրավունքի դպրոցի ղեկավարի կողմից:
- **Չիկագո-Քենթ իրավաբանական քոլեջի Մագիստրոսի դիպլոմ** Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջն ավարտելուց հետո:

ԱԻԴ ծրագիրը մեկնարկել է 2012թ.-ին համագործակցելով Չիկագո-Քենթ Իրավաբաական քոլեջի հետ, նպատակ ունենալով կատարել գիտելիքների ընդլայնում, համաշխարհային իրավունքի տարածում, շուկայում նոր տեղ գտած պետությունների իրավաբանների համար ժամանակակից իրավաբանական կրթություն ստանալու հավասար հասանելիություն: Հիմնադրումից ի վեր, ԱԻԴ ծրագիրը մեկնարկել է Վրաստանում, Ադրբեջանում, Հունաստանում, 12 Բալկանյան, Մեջերկրածովյան, և Եվրոպական երկրներ, Ղազախստան ներառյալԿենտրոնական Ասիայի հինգ երկրներ: 2012թ.-ից սկսած ԱԻԴ ծրագիրը ավարտել են ավելի քան 550 ուսանողներ Վրաստանից, Ադրբեջանից, Հունաստանից, Կիպրոսից, Իտալիայից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությունից, Սերբիայից, Ալբանիայից, Ղազախստանից և Ղրղստանից: Ուրախ ենք նշել, որ ԱԻԴ շրջանավարտներից 85- ը ՀՀ –ից են:

<u>Մեր ծրագրի առավելություններն են՝</u>

- **Առանց աշխատանքից կտրվելու** Թբիլիսիում անցկացվող ԱԻԴ ծրագրերի շրջանակներում դասընթացներին մասնակցության հնարավորություն՝ ինտերակտիվ՝ իրական ժամանակի ռեժիմով և/կամ առցանց դասընթացներին մասնակցության միջոցով: Դասընթացների **համակցված կառուցվածքը** հնարավորություն է տալիս ավարտել Թբիլիսիում անցկացվող ԱԻԴ դասընթացը՝ մասնակցելով 5 ինտենսիվ իրական ժամանակի ռեժիմով դասընթացներին և 5 առցանց դասընթացներին ավանդական լսարաններում թվային տեխնիկայի միջոցով:
- ԱԻԴ ծրագրի շրջանավարտների համար **TOEFL-ից ազատման** երաշխավորում. ԱԻԴ և Իրավաբանական գիտությունների մագիստրոսի ծրագրերի հայտեր ներկայացնելու միջոցով առանց **TOEFL–ի կամ IELTS-ի քննության:**
- ԱԻԴ ծրագրի ավարտից հետո **անմիջապես և արտոնյալ պայմաններով ընդունելություն** Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջի իրավաբանական գիտությունների մագիստրոսական ծրագրին:
- Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջում **«ԱՄՆ, Միջազգային և Անդրազգային Իրավունք»մասնագիտությամբ Իրավաբանական գիտությունների մագիստրոսի** աստիճանի ձեռքբերման հնարավորություն մեկ կիսամյակում՝ մեկ ուսումնական տարվա փոխարեն:
- Երաշխավորված **75% և 100% կրթաթոշակի** տրամադրում.
- Չիկագո-Քենթ իրավունքի քոլեջում առաջին կիսամյակն ավարտելուց հետո կրթությունը լրացուցիչ երկրորդ կիսամյակ շարունակելու և մագիստրոսի աստիճան ձեռքբերելու հնարավորություն այնպիսի պահանջված մասնագիտացումներով, ինչպիսիք են՝ **Դատավարական փաստաբանություն, Միջազգային մտավոր սեփականության իրավունք և Ֆինանսական ծառայությունների իրավունք երաշխավորված 75% կրթաթոշակի տրամադրմամբ:**
- Չիկագո-Քենթում մագիստրոսական ծրագրի ավարտից հետո շրջանավարտները կարող են շարունակել **դոկտորական կրթություն** (Ph.D./SJD) Չիկագո-Քենթում 75% կրթաթոշակի տրամադրմամբ**:**
- ԱԻԴ ծրագրի համար սահմանված ուսմանվարձը երկու կամ ավել **փուլերով** վճարելու հնարավորություն:
- Ծրագրի ավարտից հետո **3 տարիների ընթացքում** Չիկագ-Քենթում դասընթացները շարունակելու իրավունքի պահպանում:
- **ԱՄՆ-ում** ուսումնական հաստատության ներսում և դրանից դուրս **աշխատելու հնարավորություն**:
- **Վերապատրաստման հնարավորություն ԱՄՆ-ում**:
- **Աշխարհի լավագույն տեղակայումը**, Չիկագո-Քենթը տեղակայված է Չիկագոյի սրտում, որն համարվում է աշխարհում լավագույն իրավական և ֆինանսական շուկաներից մեկը:
- **Ուժեղ մասնագիտական ցանցի զարգացումը** և ԱՄՆ տարբեր մասնագիտական համայնքների հետ կապերի հաստատումը անգնահատելի ռեսուրս կարող է հանդիսանալ գտնելու հեռանկարային գործատուներ և հաճախորդներ:

Ծրագրի ազդեցությունը դիմողների կարիերայի վրա.

- Վերջին տարիներին Չիկագո-Քենթի մագիստրոսական ծրագրի շրջանավարտները շարունակել են իրենց մասնագիտական գործունեությունը ԱՄՆ-ում՝ փաստաբանական քննությունները հանձնելով և/կամ լրացուցիչ գործնական պարապմունքների /OPT/ համար դիմելով:
- Շրջանավարտներից մյուս մասը վերադարձել են իրենց երկրներ, ավելի լավ հասկանալով Ամերիկյան իրավունքի առանձնահատկությունները, ինչպես նաև ձեռք բերելով միջազգային, Եվրոպական և Ամերիկյան իրավաբանների, իրավաբանական գրասենյակների և կառավարական գործակալությունների հետ ավելի լավ աշխատելու հմտություն: Նրանցից շատերը վերադառնալուց անմիջապես հետո ներգրավվել են առաջատար բիզնես ոլորտներում կամ իրավաբանական գրասենյակներում:
- Յուրաքանչյուր դեպքում, ստացված գիտելիքները և Չիկագոյում մշակված ցանցը, Չիկագո-Քենթ ԱԻԴ ծրագրի միջոցով շարունակում է ունենալ հսկայական անհատական և մասնագիտական արժեք:

Կրթաթոշակը և ուսման վարձը.

- Հաշվի առնելով Հայաստանում ֆինանսական պայմանները և Թբիլիսիում ԱԻԴ ծրագրի մասնակցության նպատակով ճանապարհածախսերը, ԱԻԴ ծրագրի վարձավճարը նվազեցվել է և այն կազմում է **5900 ԱՄՆ դոլար**: Ընդ որում, վարձավճարը կարող է վճարվել երեք մասով: Բայց այն ուսանողները, ովքեր կնախընտրեն վճարել նախապես կանխավճարի տեսքով, ապա վարձավճարը կկազմի **5500 ԱՄՆ դոլար:**
- Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջի իրավաբանական գիտությունների մագիստրոսական ծրագրի վարձավճարը, 75% կրթաթոշակի տրամադրումից հետո, կազմելու է **10.000 ԱՄՆ դոլար՝ 44.000 ԱՄՆ դոլարի** փոխարեն: Ընդ որում, վճարումը պետք է կատարվի Չիկագո-Քենթում ուսանողի կողմից Չիկագո ժամանելուց հետո:
- **Ամբողջական (100%) ուսման կրթաթոշակի տրամադրում Չիկագո-Քենթ քոլեջում /Չիկագոյո, ԱՄՆ /, ուսումնառության համար՝** կրթաթոշակը սահմանվել է Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջի իրավական ակտերով: Նշված կրթաթոշակը ստանալու համար ուսանողները պետք է ԱԻԴ ծրագրով /Վրաստան/ քննությունների արդյունքում ունենան առնվազն 3.8. ՄՈԳ: Չիկագո-Քենթ քոլեջի դեկանի և Ամերիկյան Իրավունքի Դպրոցի ղեկավարի կողմից քննության կառնվեն վերը նշված պայմանին համապատասխանող ուսանողների դիմումները և կընտրվի առավել բարձր որակավորում ունեցող ուսանողը:
- Չիկագո-Քենթի Իրավաբանական քոլեջում լրացուցիչ երկրորդ կիսամյակի համար վարձավճարը կկազմի **7250 ԱՄՆ դոլար՝ 22000 ԱՄՆ դոլարի** փոխարեն:

Ովքեր պետք է դիմեն այս ծրագրին՝

- Նրանք, ովքեր հետաքրքրված են Չիկագո-Քենթի մագիստրատուրայի կրթությամբ պետք է ունենան առաջին կարգի իրավաբանական կրթություն (բակալավրի կոչում/LL.B) կամ պետք է լինեն վերջին կուրսի ուսանող:
- Նրանք, ովքեր հետաքրքրված են բիզնես իրավունքի ոլորտում և ստանալ միայն ԱԻԴ սերտիֆիկատ, ապա ցանկացած բարձրագույն կրթություն ունեցող դիմող (ով ունի բակալավրի կրթություն կամ վերջին կուրսի ուսանող է) կարող է փաստաթղթերը ներկայացնել ԱԻԴ ծրագիր:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է մինչև սույն թվականի սեպտեմբերի 15-ը (կանոնավոր դիմումների վերջնաժամկետ): Դիմողն էլեկտրոնային եղանակով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրություն՝անգլերեն լեզվով,
- Երաշխավորական նամակ (reference letter) ՝գրված կամ թարգմանված անգլերեն լեզվով՝ կոնտակտային ինֆորմացիայի նշումով,
- Իրավաբանական գիտությունների բակալավրի դիպլոմի պատճենը, իսկ Իրավունքի բակալավրիատի վերջին կուրսում ուսանողները՝ ԲՈՒՀ-ից տեղեկանք:
- Անձնագրի և/կամ անձը հաստատող փաստաթղթի պատճեն (ID):

Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հետևյալ հասցեներով՝ admission@chicagokentlaw.ge, r.warner@chicagokentlaw.ge, k.jeladze@chicagokentlaw.ge, m.meskhi@chicagokentlaw.ge

Զբաղվածության խնդիրներ.

Չիկագոյում երկու կիսամյակների ավարտից հետո իրավագիտության մագիստրոսը իրավունք ունի աշխատել ուսումնական հաստատության տարածքից դուրս:

Աշխատաքային թույլտվությունը պահանջվում է ուսումնական հաստատության տարածքից դուրս բոլոր տեսակի աշխատանքների համար և տրվում է Միացյալ Նահանգների իմիգրացիոն մարմնի կողմից՝վճարովի գործնական ուսուցման դիմաց: Ընդհանուր առմամբ, F1 մուտքային արտոնագիր ունեցող ուսանողները կարող են դիմել 12-ամյա տևողությամբ Գործնական Ուսուցման համար, որը սկսվում է իրենց երկու կիսամյակ տևողությամբ ուսուցման ավարտից հետո, որի ընթացքում F1 մուտքային արտոնագիր ունեցող ուսանողին, ով ստացել է իր գիտական աստիճաններն ավելի քան 9 ամիսների ընթացքում, Միացյալ Նահանգների Քաղաքացիության և Ներգաղթյալների Ծառայությունների կողմից թույլատրվում է մեկտարի ժամկետով ուսանողական մուտքային արտոնագրի վերաբերյալ Աշխատանքային Լիազորության Փաստաթղթի ներքո գործնական ուսուցում ստանալ՝ իրենց կրթությունն ամբողջական դարձնելու համար:

Փաստաբանական քննություններ.

Փաստաբանական քննությունները անցկացվում են համազգայնորեն փետրվար և հուլիս ամիսներին: Քննությանը մասնակցելու պահանջները նահանգից նահանգ տարբերվում են, հետևաբար, ուսանողներին խորհուրդ է տրվում այցելել կոնկրետ նահանգի իրավաբանական գրասենյակի էլեկտրոնային կայք՝առավել ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար: Տարբեր քննությունների և հիմնական նահանգային իրավաբանական մարմինների հղումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելել Փաստաբանական քննություն հանձնողներիԱզգային Խորհրդակցություն (National Conference of Bar Examiners) էլեկտրոնային կայք:

ԲՈՒՀ

Չիկագո-Քենթ իրավաբանական քոլեջը համարվում է Իլլինոյս նահանգի երկրորդ ամենահին իրավունքի դպրոցը: Չիկագո-Քենթ իրավաբանական քոլեջը 1936թ-ին հավատարմագիր է ստացել Ամերիկյան փաստաբաններ իասոցիացիայի կողմից, իսկ 1951 թ-ից անդամագրվել է Ամերիկյան իրավունքի դպրոցների Ասոցիացիային: Միացյալ Նահանգների **News & World Reports** ամսագիրը, որը N1 վարկանիշային գործակալն է Չիկագո-Քենթ իրավաբանական քոլեջին շնորհել է հետևյալ մրցանակը ամենապահանջվող և ամենահայտնի ծրագրերի ծարքում՝ դատավարական փաստաբանություն՝ 4-րդ տեղ, Մտավոր սեփականության իրավուքն՝ 9-րդ տեղ, Իրավաբանական գրավոր խոսք՝ 17-րդ տեղ: Համաձայն Միացյալ Նահանգների News & World Reports ամսագրի՝ Չիկագո-Քենթ քոլեջի շրջանավարտների զբաղվածության ցուցանիշը ավարտելուց անմիջապես հետո կազմում է 66.2% և 90.7% ավարտելուց հետո 9 ամսվա ընթացքում:

Օգտակար հղումներ՝

Ամերիկյան իրավունքի դպրոց՝ www.salchicagokent.com

Չիկագո-ՔենթԻրավունքի Քոլեջի՝www.kentlaw.iit.edu

Ֆեյսբուքյան բիզնես էջ՝ http://www.kentlaw.iit.edu/caucasus

Տեսանյութ՝ What Makes a Law School Great: Inside Chicago-Kent http://youtu.be/pKu1V5UTjUQ

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում եմ դիմել.

- ✓ **Արամ Չաղրյանին**-Հայաստանում ԱԻԴ ծրագրի ներկայացուցիչ
  (հեռ. +374 98 79-16-16, +374 77 07-62-62, էլ. փոստ՝ achadryan@yahoo.com)
  կամ
- ✓ **Հարություն Չաղրյանին**-Հայաստանում ԱԻԴ ծրագրի ներկայացուցիչ (հեռ. +374 98 08-62-62)
- ✓ **Քեթեվան Ջելաձեին (Ketevan Jeladze)**–ԱԻԴ Կովկասի, Թուրքիայի, Միջերկրածովյան, Բալկանների, Կենտրոնական Ասիայի համահիմնադիր և տարածաշրջանային տնօրեն
  Էլ փոստ՝ k.jeladze@chicagokentlaw.ge,kjeladze@kentlaw.iit.edu
  Լինքեդին /LinkedIn/: KetevanJeladze
  Հեռ: +995 577 97 40 01 (Regular, Viber, WhatsApp)
- ✓ **Մաիա Մեշկիին (Maia Meskhi)**– ԱԻԴ Կովկասի, Թուրքիայի, Միջերկրածովյան, Բալկանների, Կենտրոնական Ասիայի համահիմնադիր և գործադիր տնօրեն,
  Էլ փոստ: m.meskhi@chicagokentlaw.ge, mmeskhi@kentlaw.iit.edu
  Լինքեդին /LinkedIn/: Maia Meskhi
  Հեռ: +995 577 77 40 30 (Regular, Viber, WhatsApp)